

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

99

1915-2014

Մոդոնն Թեհլերյան



«Կը պայթեցնես զանգը
թիւ 1 ազգասպանին և
չես փորձեր փախչիլ .
կը կանգնիս տեղդ ,
ոտքդ սատակին վրայ
ու կը յանձնուիս
ոստիկաններուն , որոնք
կու զան ու կը
ձերբակալեն քեզ » :

Շահան Նաթալու
հրահանգը Թեհլերյանին

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Իրանահայ Համայնք..... 1
- 2- Հայաստան..... 3
- 3- Արցախ..... 9
- 4- Արեւմտյան Հայաստան..... 11
- 5- Սիջազգային..... 14
- 6- Խոհեր..... 21
- 7- Գծանկարչություն..... 21
- 8- Հայերեն-պարսկերեն առաձանձի..... 21

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր..... 1-3



Ճապիկի առաջին էջում՝ Նեմեսիս

Վերջին էջում՝ Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 186, Ապրիլ 2014 թ.

No. 186, April 2014

ماهنامه لويس - شماره ۱۸۶ اردیبهست ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Քանի դեռ Թուրքիան չի ապաշխարել եւ չի քաղել իր մեղքը, պատմության այդ էջը չի կարող փակվել չի կարող փակվել



Քանի դեռ Թուրքիան չի ապաշխարել եւ չի քաղել իր մեղքը, պատմության այդ էջը չի կարող փակվել: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը:

Հայտարարությունում նաեւ ասվում է.

«Հայոց ցեղասպանությունը պատմության մեջ տեղի ունեցած ամենազարհուրելի ոճրագործություններից է, որն աղետալի հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Չանզվածային կոտորածներին զոհ գնացին 1,5 միլիոն հայ, հարյուր հազարավոր հայեր դարձան գաղթական, հայ ժողովուրդը հայրենագրվեց:

Օսմանյան Թուրքիան կազմակերպեց եւ իրականացրեց այդ ոճրագործությունը՝ նպատակ ունենալով բնաջնջել հայությանը:

Կատարվածը ոչ միայն հայության, այլեւ մարդկության դեմ գործած հանցագործություն է: Այն վաղեմության ժամկետ չունի, երբեւէ պետք է դատապարտվի, եւ հայ ժողովուրդն արդար հատուցում ստանա:

Հայոց ցեղասպանությունն անհերքելի պատմական իրողություն է, որը ճանաչել եւ դատապարտել են աշխարհի ավելի քան քսան պետություն եւ միջազգային կազմակերպություն: Միջազգային չի ցանկանում ընդունել ճշմարտությունը: Շարունակելով ժխտողական քաղաքականությունը՝ նա դառնում է անցյալի ոճրագործության մեղսակիցը:

Մենք զորակցում ենք հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն առաջ տանելուն նպատակաուղղված բոլոր քայլերին, քանզի դրանք ծառայում են պատմական արդարության վերականգնմանը եւ նոր ոճրագործությունների կանխմանը:

Մենք մերժում ենք այդ հարցում դրսևորվող շահախնդիր մոտեցումներն ու խուսանավումները եւ կոչ ենք անում աշխարհի առաջատար պետություններին ջանքեր գործադրել հայ ժողովրդի արդար իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Հայ ժողովուրդն իր լինելիությամբ հաղթել է ցեղասպանության դաժան արհավիրքին: Սակայն, քանի դեռ Թուրքիան չի ապաշխարել եւ չի քաղել իր մեղքը, պատմության այդ էջը չի կարող փակվել:

Պահանջում ենք ճանաչում եւ հատուցում»:

Իրանահայ Համայնք

Մենք Քեզ հետ ենք Քեսաբ

By Arax news 08/04/2014



Թեհրանահայ համահավաք ի գորակցություն քեսաբահայության

Մույն թվի ապրիլի 6-ին, Թեհրանի հայաշատ Սասուն (Նարմաք) քաղաքամասի հայկական կառույցների՝ Սբ. Թարգմանչաց եկեղեցու խորհրդի, ՀՄՄ «Րաֆֆի» համալիրի, Աշխարհատեսների հայկական կենտրոնի, ՀՄՄ «Սիփան», Կանանց եկեղեցասեր, «Արմենուխի» եւ Փերիո Կրթասիրաց միությունների համատեղ նախաձեռնությամբ, Սբ. Թարգմանչաց եկեղեցու շրջափակում, տեղի ունեցաւ Քեսաբահայության գորակցելու համահավաք, որն սկսվեց Տերունական աղոթքով:

Բացման խոսքով հանդես եկավ Արփի Ալահվերդյանը: Այնուհետ

Տ. Կոմիտաս քին. Ղարախանյանն ընթերցեց Թեհրանի հայոց

թեմի առաջնորդ Տ. Մեպուհ արք. Սարգսյանի ուղերձը, ապա իր խոսքն ասաց Իրանի իսլ. խորհրդարանում Թեհրանի եւ հյուսիսային իրանահայության պատգամավոր դոկտ. Կարեն Խանլարյանը:

Օրվա առիթով խոսեց նաեւ թեհրանաբնակ քեսաբցի բանաստեղծ ՄարտոՍնայանը: Իսկ Կրթական խորհրդի

նախագահ Նորայր Մեհրաբյանը, պարսկերենով, ընթերցեց Իրանի ու միջազգային ասոյաններին ուղղված կոչը:

Նախաձեռնող կառույցների միասնական խոսքը ուղղված քեսաբահայության ընթերցեց Արթին Բաղունյանն, ուր ի մասնավորի ասվում եր.

«Մենք կոչ ենք անում ու պահանջում միջազգային ասոյաններից եւ հանրությունից՝ զիտակցելով հակասիրիական ա հարեկչության բնույթը, իրենց ձայնը բարձրացնել Թուրքի այլահամարդկային գործողությունների դեմ ու նեցուկ լինել քեսաբահայությանը»:

Վերջում փակման խոսքով կրկին հանդես եկավ Արփի Ալահվերդյանը:

Համահավաքի ընթացքում ցուացորվեցին շարժանկարներ եւ սալիկներ ու սփռվեցին երգեր:

Ձեռնարկին իրենց ներկայությունն էին բերել համայնքի հոգեւոր դասը, Իրանում Հայաստանի Հանրապետության լիազոր եւ արտակարգ դեսպան պրն. Գրիգոր Առաքելյանն ու դեսպանատան աշխատակազմը, Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի եւ Պատգամավորական ժողովի անդամներ, միությունների եւ մամուլի ներկայացուցիչներ ու հոծ թվով թեհրանահայեր:

Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցի հանձնախմբի նիստը Ատրպատականի Ազգ. Առաջնորդարանում

19/04/2014



Չորեքշաբթի 16 Ապրիլի 2014-ի երեկոյան ժամը 7-ին, Ազգային Իշխանության կողմից կյանքի կոչված հատուկ հանձնախումբը, բաղկացած Թեմի կյանքում գործող բոլոր Միություններից, Կազմակերպություններից եւ կրթական ու մշակութային կառույցներից, միասնական ծրագրավորումով կազմեց ձեռնարկների հայտագիրը, արժանավորապես նշելու համար Հայոց Ցեղասպանության 99-րդ տարելիցը Թեմում:

Թեմիա Առաջնորդ՝ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճյանի եւ Թեմական Խորհրդի հովանավորությունը վայելող սույն հանձնախմբի հանդիպմանը ներկա գտնվեցին Թեմական Խորհրդի ներկայացուցիչներ, ներքին՝ ազգային, թե արտաքին՝ հա-րաբերական բոլոր աշխատանքների համադրումը կատարելու համար:

Նշենք, թե այս տարի եւս, նման նախորդ տարիների, Ատրպատականի Հայոց Թեմը հավատարմությամբ կատարելու է Հայոց Ցեղասպանության նշումը, Ս. Պա-տարագով եւ ազգային համաժողովրդական ծրագրով:

Հայտնենք, թե Ուրմիո շրջանում եւս Ապրիլյան ձեռնարկները համադրվում են Գործակալական Խորհրդի աշխատանքով, ներառելով գաղութում գործող բոլոր Միություններին ու կազմակերպություններին, արժանավորապես հարգելու համար մեր նահատակների հիշատակը:

Ատրպատականի հայոց թեմը հյուրընկալում է Գերմանացի ակադեմականների

Ատրպատականի հայոց թեմը հյուրընկալում է Գերմանացի ակադեմականների

19/04/2014



16 գերմանացի ակադեմականներ Երեքշաբթի 15 Ապրիլի 2014-ին ժամանեցին Թավրիզ, որպես հյուրերը Ատրպատա-կա-նի Հայոց Թե-մի: Տարբեր մասնագիտություններում հմտացած ակադեմական-ները, որոնք մեծ մասամբ դասախոսում են Համբուրգի համալսարանում, Թավրիզ ժամանեցին հրա-վերով Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճյանի: Դասախոսական խմբի ղեկավարությունը ստանձնել էր Համ-բուրգի համա-լսա-րանի դասախոս՝ Իշխան Չիֆթճյանը, որ նաև թարգմանի դեր էր կատարում:

Սույն այցի գլխավոր նպատակն է ծանոթանալ Ատրպատականի պատմական Թեմին ու նրա եկեղեցական ու ազգային ժառանգությանը, դարավոր վանքերին ու հայկական կոթողներին, եւ հատկապես գերմանական ակադեմիայի շրջանակում ծանոթացնել հայկական կենդանի այն գաղութը, որը դարեր շարունակ ապրում է Ատրպատականի տարածաշրջանում:

Երեքշաբթի կեսօրին, Ազգային Առաջնորդարանի «Էմիլ Հակոբյան» Դահլիճում Թեմակալ Առաջնորդը պաշտոնապես ընդունեց հյուրերին: Հանդիպումը դա-սախոսական ծրագրի վերածվեց, երբ իրեն ուղղված հարցերին պատասխանելու ընթացքում, Թեմակալ Առաջնորդը համապարփակ ծանոթություն տվեց դարավոր Թեմի վարչական կառույցի, ժողովական աշխատանքների, եկեղեցական կյանքի ու հասարակական ծառայության, կրթական համակարգի եւ մարդասիրական աշ-խատանքների, Միութենական գործունեության ու կազմակերպությունների կատա-րած նվիրյալ ծառայության մասին:

Հանդիպման ներկա գտնվեց նաև Թեմական Խորհրդի ատենապետ՝ Պրն. Ռուբիկ Ջանանյանը, ողջունելով պաշտոնական հյուրերի ներկայությունը Թեմում: Սույն պաշտոնական հանդիպման մասնակցեց նաև Թավրիզի համալսարանի երկ-րաչափական ամբիոնի վարիչ՝ Դուկտ. Բադայի Մեհր, որ դարձյալ ողջույնի խոսքով հանդես եկավ:

Ատրպատականի Հայոց Թեմի եկեղեցիների ու վանքերի այցելություն, ուսումնասիրություն, պատմության անցքերի գիտական ներկայացում եւ որոշ դրվագների վիպականացում մաս է կազմում խմբի աշխատանքային այցին:

Հայկական ձեռարվեստի ցուցահանդես Թավրիզում

19/04/2014 20:20:00



Երկուշաբթի 14 Ապրիլի 2014-ին, երե-կոյան ժամը 7-ին, Ազգային Առաջնորդարանի «Հ. Ոսկանյան» սրահում տեղի ու-նեցավ պաշտոնական բացումը «Հայկական Ձեռարվեստի Ցուցահանդես»ին, հո-վանավորությամբ Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճյանի եւ Թեմական Խորհրդի:

Ցուցահանեսը կազմակերպվել էր Հ.Օ.Միության Թավրիզի Մասնաճյուղի վարչության կողմից, որին մասնակցում էին տարբեր միություններ եւ անհատներ, իրենց կիրառական արվեստի գործերը ներկայացնելով: Ասեղնագործության, գորգագործության, հյուսվածեղենի, ուլունագործության եւ այլ կիրառական արվեստի նմուշների կողքին կային նաև նկարչական արվեստի գործեր թե՛ պատանների վրա, թե՛ ջրաներկային եւ թե՛ կտավի վրա իրագործված տեսականիներով: Ցուցադրված էին հարսանեկան զգեստներ, սեղանի սփռոցներ, անկողինի ծածկոցներ , նրբահյուս մետաքսաթել ուսնոցներ, տոնական հարդարանքներ, ուլունքներով կերտված վզնոցներ ու թեւնոցներ, տարազահանդեսի համար հատկապես պատ-րաստված զգեստներու մայր օրինակներ իսկական զարդանախշերով, ինչպես նա-եւ այլ իրեղեններ, բոլորն էլ նրբակերտ աշխատանքով հագեցված:

Մշակութասեր ներկաներ ցուցադրված հին թե նոր նմուշները դիտեցին, որոն-ցից ոմանք ավելի քան 100 տարվա հնություն ունեին: Իսկ ամբողջությամբ նոր աշ-խատանքներ, հատկապես հախճապակիի վրա գծագրված օրինակները նաև վա-ճառքի են դրվել, որոնց հասույթը տրամադրվելու է Հ.Օ.Միության մարդասիրական աշխատանքներին:

Հ.Օ.Միության վարչության ուղղած իր խոսքի մեջ, Թեմակալ Առաջնորդը բարձրորեն գնահատեց մշակութային նման ծրագրեր կազմակերպելու նախաձեռ-նությունը, որոնց միջոցով ազգային ստեղծագործ ոգին պահպանվում է ու աճում նոր սերնդի մոտ: Նշենք, թե պարմանուհիներ եւս իրենց ձեռային աշխատանքների նմուշներից գետեղել էին, թարմացնելով հինն եկող ավանդության ուղին:

Հայաստան

Էդվարդ Նալբանդյանը նամակ է հղել Բան Կի-Մունին. թեման Քեսաբի դեպքերն են

Ապրիլ 02, 2014 | 18:36

Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը



մարտի 28-ին Սիրիայի հյուսիս-արեւմուտքում իրավիճակի սրման վերաբերյալ նամակ է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունին, որտեղ, մասնավորապես, ասված է.

«Հայաստանն իր խորը մտահոգությունն է հայտնում վերջին շրջանում Սիրիայի հյուսիս-արեւմուտքում՝ առավելապես հայերով բնակեցված հինավուրց Քեսաբ քաղաքում եւ շրջակա 12 գյուղերում իրավիճակի սրման կապակցությամբ: Հասանելի բոլոր վկայությունները եւ Քեսաբի աշխարհագրական դիրքը թույլ են տալիս եզրակացնել, որ վերջին հարձակումները, առանց որեւիցե կասկածի, իրականացվել են Թուրքիայի տարածքից սահմանը հատած, ալ-Քաիդայի հետ կապված ահաբեկչական խմբերի կողմից: Բռնի գործողությունները, որոնք մեծ մասամբ ուղղված էին քաղաքացիական բնակչության դեմ, հանգեցրել են տեղի բնակչության տեղահանմանը: Ծայրահեղական խմբերը պղծել են Քեսաբի հայկական եկեղեցիները, զգալի վնաս են հասցրել բնակիչների ունեցվածքին՝ արձանագրելով մարդու իրավունքների կոպտագույն խախտումների գորշ տեսարան: Միայն մի քանի տարեց մարդիկ են մնացել քաղաքում, ովքեր ի վիճակի չեն եղել հեռանալ: Այս տակալի հարձակումները մեծապես վտանգում են ՄԱԿ-ի ԱԽ կողմից միաձայն ընդունված 2139 եւ 2118 բանաձեւերի իրականացումը, որոնք ուղղված են ճանապարհի հարթելու սիրիական ճգնաժամի լուծման համար:

Հայաստանը բազմաթիվ առիթներով բարձրացրել է Սիրիայում զինված հակամարտության պայմաններում էթնիկ եւ կրոնական փոքրամասնությունների, այդ թվում հայերի, պաշտպանության անհապաղ անհրաժեշտության մասին, ովքեր հայտնվել են ծայրահեղ խոցելի իրավիճակում եւ դարձել են առաջնային թիրախներ: Քանի որ հումանիտար ճգնաժամը շարունակվում է, շատ կարեւոր է անհապաղ պահանջել թուրքական իշխանություններից ձեռնարկելու հրատապ քայլեր՝ ծայրահեղական խմբերի կողմից իր տարածքի հետագա օգտագործումը կանխելու համար:

Քաղաքացիական բնակչության դեմ ուժի կիրառումը, անկախ նրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, պետք է միանշանակորեն դատապարտվի: Միջազգային հանրությունը պետք է վճռական ջանքեր գործադրի տեղահանված մարդկանց՝ ներառյալ հայերի, ապահովությունը եւ անվտանգությունը երաշխավորելու համար, պայմաններ ստեղծելու իրենց բնակչության վայրերը նրանց շտապ, անվտանգ եւ արժանապատիվ վերադարձի համար եւ՝ ապահովելու անհրաժեշտ մարդասիրական օգնություն՝ իրենց հրատապ կարիքները հոգալու համար»:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը հրաժարականի դիմում է ներկայացրել



Ապրիլ 03, 2014

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը հրաժարականի դիմում է ներկայացրել: Այդ մասին այսօր՝ ապրիլի 3-ին կայացած ՀՀԿ Գործադիր մարմնի նիստից հետո լրագրողներին հայտնել է ՀՀԿ մամուլի քարտուղար, ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

Վերջինիս խոսքով, վարչապետը դիմումը ներկայացրել էր դեռ մեկ ամիս առաջ, սակայն հաշվի առնելով Մաքսային միության հետ կապված եւ այլ հարցեր, նախագահ Սերժ Սարգսյանը խնդրել էր մեկ ամիս սպասել:

Էդուարդ Շարմազանովի խոսքով, վարչապետի դիմումը բավարարվել է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

DEPARTMENT OF PUBLIC RELATIONS AND MASS MEDIA OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Հեռ.՝ 522.364, 525.392, Ֆաքս՝ 522.364

Էլ. փոստ՝ press@president.am , URL: <http://www.president.am>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանի ներկայացրած հրաժարականը՝ որոշում եմ.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության հրաժարականը:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին՝ շարունակել պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը:
3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2014-04-03



Յոթիկ Աբրահամյանը՝ ԳԳ 13-րդ վարչապետ

13 Ապրիլի 2014 - 15:37

Հայաստանի Հանրապետության 13-րդ վարչապետը Յոթիկ Աբրահամյանն է: Այս մասին այսօր կայացած ՀՀԿ ԳՄ, այնուհետև խորհրդի նիստից հետո լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԱԺ փոխնախագահ, ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

«Կուսակցության նախագահը գործադիր մարմնի անդամներին ներկայացրեց վարչապետի թեկնածուին: Գործադիր մարմինը հավանության արժանացրեց, իսկ

այնուհետև խորհրդի նիստում քննարկեցինք և միաձայն ընդունվեց գործադիր մարմնի հավանությունը: Նախագահ Սերժ Սարգսյանի առաջարկով՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետ է առաջադրվում Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահի տեղակալ Յոթիկ Աբրահամյանը»,- հայտարարեց Շարմազանովը:

Հիշեցնենք, որ ապրիլի 3-ին հրաժարական էր տվել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Ըստ Սահմանադրության՝ 10-օրյա ժամկետում պետք է հայտարարվի նոր վարչապետի անունը, իսկ վերջնաժամկետը այսօր էր՝ ապրիլի 13-ին: Յոթիկ Աբրահամյանը ծնվել է 1958թ. հունվարի 24-ին, Արարատի մարզի Մխչյան գյուղում: Ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

Ծառայել է խորհրդային բանակում: 1990-1991թթ. Բուրաստանի կոնյակի գործարանի բաժնի պետ: 1991-1995թթ. Արտաշատի գինու-կոնյակի գործարանի տնօրեն: 1995-1999թթ. ՀՀ Ազգային ժողովի առաջին գումարման պատգամավոր: 1995-1996թթ. Արտաշատի քաղխորհրդի գործկոմի նախագահ: 1996-1998թթ. Արտաշատի քաղաքապետ: 1998-2000թթ. ՀՀ Արարատի մարզի մարզպետ: 2000-2001թթ. ՀՀ տարածքային կառավարման եւ քաղաքաշինության գործունեությունը համակարգող նախարար: 2001-2002թթ. ՀՀ տարածքային կառավարման նախարար: 2002-2005թթ. ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար: 2005-2007թթ. ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ համակարգող նախարարի գործառնություններով: 2007-2008թթ. ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար: 2008թ. ապրիլի 21-ին նշանակվել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար: 2008թ. օգոստոսի 24-ին ընտրվել է ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: 2008թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ նախագահի հրամանագրով ազատվել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնից: 2008թ. սեպտեմբերի 29-ին ընտրվել է ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի նախագահ: 2011թ. նոյեմբերի 21-ին՝ հրաժարականի իր դիմումի համաձայն, Ազգային ժողովի նախագահի լիազորությունները դադարել են: 2012թ. մայիսի 6-ին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի

Հանրապետական կուսակցությունից: 2012թ. մայիսի 31-ին ընտրվել է ՀՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի նախագահ: 2005 թվականից ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի անդամ է:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի նախագահն է, նույն բուհի պատվավոր դոկտոր: Երեսնի պետական համալսարանի խորհրդի անդամ է: Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահն է, գործադիր մարմնի եւ խորհրդի անդամ:

ՀՀ նախագահի 2012թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրով պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով: Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, ՀՀ վարչապետի հուշամեդալով, «Մարշալ Բաղրամյան» մեդալով, «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկյա հուշամեդալով, Հունաստանի խորհրդարանի ոսկե մեդալով, Թատերարվեստին մատուցած անգնահատելի ծառայությունների եւ Թատրոնի միջազգային օրվա առթիվ՝ Թատերական գործիչների միության Ոսկե մեդալով, Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, միջխորհրդարանական համագործակցության ամրապնդման գործում կարևոր ներդրում ունենալու համար՝ ԱՊՀ ՄԽԿ ոսկե մեդալով, «Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի ԱԴԾ սահմանապահ վարչություն» հուշանշանով: Ամուսնացած է, ունի երեք զավակ եւ յոթ թոռնիկ: **HayNews.am**

Բողոքի ակցիա 33-ում ԱՄՆ դեսպանատան առջև՝ Քեսաբի դեպքերի հետ կապված Թուրքիային դատապարտելու պահանջով

Ապրիլ 02, 2014

Մոտ մեկ տասնյակ քաղաքացիներ այսօր՝ ապրիլի 2-ին, բողոքի ակցիա անցկացրին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան մոտ՝ պահանջելով, որպեսզի ԱՄՆ-ն դատապարտի Թուրքիայի, որպես ՆԱՏՕ-ի անդամի գործողությունները սիրիական Քեսաբում:

«Մենք այստեղ ենք, որպեսզի մեր մտահոգությունը հասցնենք Քեսաբում հայ բնակչության տեղահանությունների հետ կապված, որոնց մասնակցել են թուրքական ռազմական ուժեր», - լրագրողներին ասաց նախաձեռնության անդամ Լեւոն Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ը հայտարարել է, որ մտահոգված է կատարվածով, բայց Թուրքիային դատապարտող որեւէ հայտարարություն չի արել: Ակցիային մասնակցում էին նաեւ քեսաբահայեր, որոնց խոսքով՝ ամեն ինչ, որ կատարվել է Քեսաբում, արվել է թուրքերի օգնությամբ:

«Թալանել են քեսաբահայերի տները, բայց ոչ թե սիրիացիներն են թալանել, այլ վարձկան տեռորիստները: Պահանջում ենք, որ ԱՄՆ-ը լուր չմնա», - հայտարարեց ակցիայի քեսաբահայ մասնակիցը՝ նշելով, որ իրենք դեռ հույս ունեն վերադառնալ իրենց ծննդավայր:

Ի դեպ, դեսպանատան առջև էին նաեւ «Ռոսիա» եւ «Միր» հեռուստաընկերությունների լրագրողները:

Քիչ անց ակցիայի մասնակիցներին մոտեցավ ԱՄՆ փոխդեսպան Կլարկ Պրայսը, որը լսեց նրանց պահանջը, սպա Քեսաբում կատարվածի մասին լսեց քեսաբահայից եւ վստահեցրեց, որ իր լսած ու տեսած ամեն ինչի մասին կտեղեկացնի դեսպանին:

Հիշեցնենք, որ մարտի 21-ի վաղ առավոտյան ահաբեկչական Ալ-Նուսա խմբավորման ջոկատները 4 կողմերից լայնածավալ հարձակման են անցել Սիրիայի հյուսիսում հայերով եւ արեւիներով բնակեցված Լաթաքիայի շրջան: Թուրքիայի Հաթայ նահանգին սահմանակից Սիրիայի հայաբնակ Քեսաբի շրջանում ապրող 600 հայ ընտանիք տեղափոխվել են Լաթաքիա: **NEWS.am**

Տիգրան Սարգսյանը կանցնի դիվանագիտական աշխատանքի

13 Ապրիլի 2014

Հայաստանի Հանրապետության արդեն նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը դիվանագիտական աշխատանքի կանցնի, այս մասին այսօր կայացած ՀՀԳԳՄ, այնուհետև խորհրդի նիստից հետո լրագրողների հետ հանդիպմանն ասաց ԱԾ փոխնախագահ, ՀՀԳ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

«Նիստում Հանրապետական կուսակցությունը շնորհակալություն հայտնեց Տիգրան Սարգսյանին: Նա կշարունակի իր աշխատանքը դիվանագիտական ծառայության մեջ: Նա անցնելու է դիվանագիտական աշխատանքի», - նշեց Շարմազանովը՝ չհայտնելով, թե կոնկրետ ինչ պաշտոն է ստանալու նախկին վարչապետը:

Հիշեցնենք, որ ապրիլի 3-ին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հրաժարական էր տվել: **HayNews.am**

Սփյուռքի նախարարությունում քննարկվել է Քեսաբի վիճակը

Ապրիլ 01, 2014

Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի ղեկավարությամբ ապրիլի 1-ին տեղի ունեցավ Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը, որին հանձնաժողովի անդամներից բացի մասնակցում էին նաեւ Քեսաբի իրադարձություններն ուսումնասիրելու նպատակով Սիրիա մեկնած ԱԾ

պատգամավորներ Սամվել Ֆարմանյանը, Թեան Պողոսյանը, Արման Սահակյանը եւ Էդմոն Մարտիքյանը: Օրակարգում որպէս հրատապ խնդիր առաջինը քննարկվեց Քեսաբում վերջին օրերին տիրող իրավիճակին վերաբերող հարցը:



Աժ պատգամավորներ Սամվել Ֆարմանյանը եւ Թեան Պողոսյանը նիստի մասնակիցներին ներկայացրին Միքիայում իրենց կատարած փաստահավաք գործունեության մանրամասները, Քեսաբում ստեղծված իրավիճակը եւ դրա հնարավոր զարգացումները: Նշվեց, որ ՀՀ ԱԳՆ եւ դիվանագիտական կառույցների կողմից այս ուղղությամբ պատշաճ աշխատանքներ են տարվում: Կարելուվեց խնդրի առնչությամբ հայկական տեղեկատվական դաշտում օբյեկտիվ տեղեկության տարածումը եւ հակամարտության կողմերի կողմնակալ դիրքորոշումները ներկայացնելուց խուսափելը: Քեսաբն ունի բնակչության մոնոէթնիկ կազմ եւ հիմնականում բնակեցված է հայերով: Այս պարագայում Քեսաբում տեղի ունեցող իրադարձությունները մարդու իրավունքների զանգվածային խախտման վառ օրինակ են եւ ՄԱԿ-ի հումանիտար ծրագրերը եւս պետք է աջակցություն ցուցաբերեն:

Հրանուշ Հակոբյանը նշեց, որ ամենօրյա հեռախոսակապի մեջ է Քեսաբի քաղաքապետ Վազգեն Չափարյանի հետ հավաստի տեղեկություններ ձեռք բերելու եւ առկա խնդիրներին լուծում տալու նպատակով: Պետք է առավելագույնս հաշվի առնել սիրիահայերի ցանկությունները: Քեսաբահայերի Հայաստան վերադառնալու պարագայում ՀՀ իշխանությունների կողմից կձեռնարկվեն միջոցներ նրանց օգնելու նպատակով:

Ի գիտություն նշվեց, որ Հայաստան համահայկական հիմնադրամը հատուկ կոչով է հանդես եկել եւ քեսաբահայերի օգնության նպատակով դրամահավաք է սկսել:

Այո՛, գրեթե 100 տարի է, ինչ ողջ միջազգային հանրությունը սպասում է, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը. Նալբանդյանի ելույթը Բրյուսելում



Ապրիլ 01, 2014

Այո՛, գրեթե 100 տարի է, ինչ ողջ միջազգային հանրությունը սպասում է, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Այս մասին, այսօր՝ ապրիլի 1-ին, Բրյուսելում Ցեղասպանությունների կանխարգելման միջազգային գիտաժողովի եզրափակիչ նիստում ունեցած իր ելույթում նշել է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Ստորեւ ներկայացնում ենք նրա ելույթը. Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել փոխվարչապետ պարոն Դիդյե Ռեյնդերսին՝ կազմակերպելու համար այս կարևոր համաժողովը՝ նվիրված ցեղասպանությունների կանխարգելմանը, Ռուանդայում ցեղասպանության քսանամյա տարելիցի կապակցությամբ: Ես նաև կցանկանայի շնորհակալություն հայտնել Գլխավոր քարտուղար Բան Կի Մունին և ԵԽ գլխավոր քարտուղար Թյորբյորն Յագլանդին՝ այս միջոցառմանն իրենց անձնական աջակցության համար:

Ինչպես նշեց Ռուանդայի ցեղասպանությունը վերապրած Էսթեր Մուժավայոն՝ չորս շաբաթ առաջ ժնկում տեղի ունեցած ցեղասպանությունների կանխարգելմանը նվիրված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի բարձրաստիճան քննարկման ժամանակ՝ «Այսօր արդեն հայերի չորրորդ սերունդն է, որ դեռևս սպասում է»: Այո՛, գրեթե 100 տարի է, ինչ ոչ միայն հայերը, այլ ողջ միջազգային հանրությունը սպասում է, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Հաջորդ տարի կլրանա այս ողբերգության 100-րդ տարելիցը: Որպես մի ժողովուրդ, որը վերապրել է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ մենք մեծ բարոյական պատասխանատվություն ենք զգում մեր ներդրումը

բերելու միջազգային հանրության ջանքերին՝ կանխելու մարդկության դեմ հանցագործությունները:

1948թ. Յեղասպանության կանխարգելման կոնվենցիայի ընդունումից հետո անցած 60 տարիներին Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի և այլ ողբերգությունները ցույց տվեցին, որ բարի կամքը բավարար չէ մարդկության դեմ հանցագործությունների նոր դեպքերը բացառելու համար:

Երբ մենք խոսում ենք անպատժելիության և դատապարտման բացակայության մասին՝ որպես ցեղասպանությունների կրկնության կարևոր պատճառ, շատերը մեջ են բերում 1939թ. ասված Հիտլերի խոսքը. «Ո՞վ է, ի վերջո, այսօր խոսում հայերի բնաջնջման մասին»: Բայց նույնիսկ իշխանության գալուց առաջ՝ 1931թ., գերմանական թերթերին տրված իր հարցազրույցներից մեկում Հիտլերը մատնանշում է հայերի կոտորածը՝ որպես հնարավոր տարբերակ այլ ազգերի հանդեպ կրկնելու համար: Հասկանալի է, որ ցեղասպանությունների կրկնության կամ մարդկության դեմ հանցագործությունների նոր փորձերի առանցքային պատճառներից մեկը միահամուռ և համարժեք միջազգային արձագանքի բացակայությունն է: Յեղասպանությունների կանխարգելումը պատասխանատվություն է, որը պետք է կիսվի միջազգային հանրության կողմից: Սա պահանջում է պետությունների կողմից քաղաքական հանձնառություններ՝ թույլ չտալու ցեղասպանությունների իրականացումը աշխարհի ցանկացած մասում՝ առանց ստորադասելու այս համամարդկային խնդիրը որևիցե աշխարհաքաղաքական հաշվարկների:

Հասունացող ցեղասպան մթնոլորտի կանխումը ցեղասպանության կանխարգելման կարևոր հարթություն է: Անհրաժեշտ է չանտեսել և արմատախիլ անել այնպիսի ցեղասպան դրսևորումները, ինչպիսիք են ազգային, էթնիկ, ռասայական, կրոնական հողի վրա քարոզվող ատելությունը և թշնամանքը: Իհարկե, լիակատար կանխատեսումը ոչ միշտ է հնարավոր թվում, բայց հնարավոր է բացահայտել ցեղասպանության դրսևորումներին տանող վտանգավոր իրավիճակները և գոտիները: Միջազգային հանրությունը պետք է գնահատի ցեղասպան մթնոլորտի արմատները և պատճառները, որոնք հանգեցնում են այս սարսափելի հանցագործությանը և կանխի դրանք, քանի դեռ ուշ չէ: Յեղասպանությունն աներևակայելի հանցագործություն է այն հասարակության համար, որը հիմնված է հանդուրժողականության և մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանության վրա:

Ժողովրդի հիշողության իրավունքը, իրավունքը իմանալու անցյալի ողբերգությունների պատմությունը կրթության և հիշատակի միջոցով, առանցքային դեր

ունեն ցեղասպանության կանխարգելման և դատապարտման ճանապարհին:

Դա շատ կարևոր է, քանզի դառը փորձը ցույց է տալիս, որ ցեղասպանություն իրականացնողները տարբեր աշխարհագրական շրջաններում և տարբեր պատմական ժամանակահատվածներում արագորեն ըմբռնել և փոխառել են իրենց նախորդած ոճրագործների մարտավարությունը: Երիտթուրքերի Միության և առաջադիմության կոմիտեն Թուրքիայում, Նացիոնալ-սոցիալիստական գերմանական աշխատավորական կուսակցությունը Գերմանիայում, Հուտոների հանուն ժողովրդավարության ազգային հեղափոխական շարժումը Ռուանդայում, նրանք բոլորն օգտագործել են հատուկ ռազմականացված խմբավորումները՝ որպես զանգվածային սպանությունների հիմնական իրականացնողներ: Դրանք էին Թեջքիլյաթ Մահսուսան, Շուցտաֆֆելը, Իստերահամվեն: Ակնհայտ են մի շարք նմանություններ ցեղասպան գործընթացներում, վերոհիշյալ և մարդկության դեմ իրականացված այլ հանցագործություններում, ինչպիսիք են գոհերի դեմ գործողությունները, նրանց ունեցվածքի բռնագրավումը, կոտորածների իրականացման ձևերը:

Յեղասպանությունների՝ Մեծ Եղեռնի, Շոահի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի և այլ ցեղասպանությունների գոհերի հիշատակի օրերին պետք է մոտենալ ճանաչման և հաշտեցման ուղղությամբ առաջ շարժվելու պատրաստակամությամբ: Իհարկե, իրական հաշտեցումը չի նշանակում անցյալի մոռացում կամ երիտասարդ սերունդներին ժխտողականության հեքիաթներով սնուցում:

Քաղաքակիրթ աշխարհը վճռականորեն մերժում է ատելության, ռասիզմի հրահրումը, անհանդուրժողականության տարածումը, ցեղասպանության, մարդկության դեմ գործած հանցագործությունների ժխտումը՝ ազատ արտահայտվելու իրավունքի պատրվակով: Միջազգային ցեղասպանագետների կարծիքն այն է, որ ժխտումը ցեղասպանության շարունակությունն է: Տիկնայք և պարոնայք,

Եզրափակելով ես կցանկանայի հիշատակել Հայաստանի կողմից նախաձեռնած և անցյալ տարի Մարդու իրավունքների խորհրդում կոնսենսուսով ընդունված Յեղասպանության կանխարգելման վերաբերյալ բանաձևը, որի նպատակը միջազգային հանրության միասնական ջանքերով ապագայում ցեղասպանությունների կրկնության կանխարգելումն է: Այս բանաձևում սահմանված առանցքային մեխանիզմը վաղ կանխարգելման միջազգային կարողությունների հետագա զարգացումն է: Քաջալերող է, որ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագիտացած միջազգային կառույցները իրենց առաջնային խնդիրն են դարձրել վաղաժամ զգուշացումը և ցեղասպանության կանխարգելումը:

ՌԴ ՉՌԻ պատվիրակությունը ցեղասպանության զոհերի

հուշարձանային համալիր է այցելել

Ապրիլ 10, 2014

Ռուսաստանի զինված ուժերի օդա-տիեզերական պաշտպանության զորքերի պատվիրակությունը Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանային համալիր է այցելել: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է Հայոց ցեղասպանություն թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը:

Նրա խոսքերով, պատվիրակությունը գլխավորել են օդա-տիեզերական պաշտպանության զորքերի հրամանատարի առաջին տեղակալի շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Պավել Կուրաչենկոն, ԱՊՀ պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղար Ալեքսանդր Սինայսկին եւ ՀԱՊԿ միացյալ շտաբի պետ գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Ստուդենիկինը:

Գեներալ-լեյտենանտ Պավել Կուրաչենկոն ծաղկեպսակ է դրել հուշարձանին: Պատվիրակության անդամները եւս ծաղիկներ են դրել «Անմար կրակին» եւ մեկ բույս է լուծարվում հարգել անցած դարի առաջին ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ողջունում է ԱՄՆ Սենատի

հանձնաժողովի ընդունած բանաձեւը



Ապրիլ 12, 2014

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ողջունում է ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից Հայոց Ցեղասպանությունը ճանաչող թիվ 410 բանաձեւի ընդունման փաստը:

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ այս խնդրին անդրադարձ է կատարվել այսօր՝ ապրիլի 12-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական խորհրդի հերթական նիստում:

«Միջեկեղեցական խորհուրդը նամակ է ուղղել ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների

հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեսին՝ հանուն Հայ Եկեղեցու եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գնահատանք փոխանցելով նրան եւ հանձնաժողովի անդամներին:

Նամակում մասնավորապես կարեւորվում է Հայոց Եղեռնի 100-ամյա տարելիցի սեմին Հայոց Ցեղասպանության ճանաչմանն ուղղված նման բանաձեւի որդեգրումը եւ ընդգծվում, որ այն խթան կլինի աշխարհում խաղաղության հաստատման, մարդկության դեմ գործված ոճրագործությունների կանխարգելման եւ դատապարտման գործում», -ասված է տարածված հաղորդագրության մեջ:

Փորձագետ. Հայոց ցեղասպանության հարցը ԱՄՆ-ի համար քաղաքական առեւտրի առարկա է



Ապրիլ 17, 2014

Հայոց ցեղասպանության հարցը ԱՄՆ-ի համար քաղաքական առեւտրի առարկա է: Այս մասին, այսօր՝ ապրիլի 17-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի փոխդեկան, թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը՝ մեկնաբանելով ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունված բանաձեւին:

Նրա խոսքով՝ նման քայլով պաշտոնական Վաշինգթոնը, մի կողմից ճնշում է գործադրում Թուրքիայի վրա, մյուս կողմից փորձում է սիրաշահել Հայաստանին՝ Ռուսաստանի եւս Արեւմուտքի էլիտաների աճող հակադրության ֆոնին:

Բացի այդ, Սպիտակ տունը հաշվի է առնում հայկական գործոնը առաջիկա ընտրությունների համատեքստում: «Ակնհայտ է, որ մենք գործ ունենք սառը քաղաքական հաշվարկի հետ, եւ ԱՄՆ-ի կողմից ձեռնարկվող քայլերը հայամետ ուղղվածություն չունեն», -ընդգծել է թուրքագետը՝ հավելելով, որ թուրք-ամերիկյան հարաբերություններն իրենց արմատներով գնում են մինչեւ 1950-ական թվականները եւ հիմնված են փոխադարձ շահերի վրա: «Այսպիսով, քիչ հավանական

է, որ բարոյականության հարցը, այսինքն ցեղասպանության հարցը, կարող է գերակայել երկու գործընկերների քաղաքական շահին»,-ամփոփել է Մելքոնյանը:

Հիշեցնենք, որ ԱՄՆ Մենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը ապրիլի 10-ին Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւ է ընդունել:

Հայտնի է դարձել 2014-ի սկզբին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվը



Ապրիլ 17, 2014
 Թուրքիա մեկնած հայաստանցիների թիվը 2014-ի հունվար-փետրվար ամիսներին կազմել է 6 435 հոգի: Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2014-ի հունվարին Թուրքիա է այցելել 2 691 հայաստանցի, իսկ փետրվարին՝ 3 744:
 Նախորդ տարի հունվարին Թուրքիա էր այցելել 2600, փետրվարին՝ 4010 հայաստանցի:
 Նշենք, որ 2013-ին Թուրքիա էր այցելել 73 հազար 365 հայաստանցի, իսկ 2012-ին՝ 70 հազար 956:
 NEWS.am



Ռուսաստանի ամենահարուստ 200 գործարաններից 7-ն ազգությամբ հայ են

17 Ապրիլի 2014

Forbes-ը հրատարակել է Ռուսաստանի 200 ամենահարուստ գործարանների ցուցակը:

Այն գլխավորում է Металлоинвести-ի, Mail.ru Group-ի, Мегафони-ի, Евросеть-ի, DST Global-ի 60-ամյա ղեկավար Ալիշեր Ուսամանովը, ում կարողությունը գնահատվել է

18.6 մլրդ դոլար: Նախորդ տարվա համեմատ այն ավելացել է 1 միլիարդով: Forbes-ի ցուցակում ընդգրկված է 7 հայ գործարար: Նրանց թվում առաջինը Магнит-ի համասեփականատեր, 46-ամյա Մերգել Գալիցկինն է՝ 13-րդ հորիզոնական, 10.3 մլրդ դոլար կարողություն: Ташир-ի սեփականատեր Սամվել Կարապետյանը 26-րդ հորիզոնականում է՝ 4.3 մլրդ դոլար: Росотсрах-ի գործադիր տնօրեն և РГС Банк-ի համասեփականատեր Դանիլ Խաչատուրովը 40-րդ հորիզոնականում է՝ 2.6 մլրդ դոլար: Ресо гарантия ապահովագրական ընկերությունը ներկայացնող Նիկոլայ Սարկիսովը 98-րդ հորիզոնականում են՝ 1.1 մլրդ դոլար: 99-րդ տեղում գտնվում է նրա եղբայրը՝ Մերգել Սարկիսովը՝ 1.1 մլրդ դոլար: Գործարար Ռուբեն Վարդանյանը 124-րդ հորիզոնականում է՝ 0.85 մլրդ դոլար: Արերտ Ավդոյանը գտնվում է 133-րդ հորիզոնականում՝ 0.75 մլրդ: HayNews.am

Արցախ

Թուրքական կայքը Արցախը որպես անկախ հանրապետություն է ներկայացնում

Ապրիլ 11, 2014
 Ցուցահանդեսների կազմակերպմամբ եւ տուրիզմով զբաղվող թուրքական Fuarsepeti կայքում Արցախը ներկայացված է որպես անկախ պետություն, առանձին դրոշով եւ դրամական միավորով:
 Կայքի «Երկրներ» բաժնում առանձին ներկայացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերաբերյալ նշված է, որ լեզուն հայերենն է, բնակչությունը՝ 138 հազար, տարածքը՝ 4,400 քմ եւ դրամական միավորը՝ հայկական դրամ:
 Արցախի նկարագրության մեջ նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անվանում են նաեւ Արցախի Հանրապետություն, որն իրավական առումով «պատկանում է» Ադրբեջանին, սակայն փաստացի անկախ պետություն է:

Եվրախորհրդարանի նախագահ. ԵՄ-ն ֆինանսավորում է դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ծրագիրը



Ապրիլ 22, 2014 | 12:42

ԵՆԽՎ հունվարյան նստաշրջանի ընթացքում ԵՆԽՎ հայկական պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանը հարց էր ուղղել Եվրոպական խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցին՝ Եվրոպական խորհրդարանի կողմից 2011 թվականի ապրիլի 7-ին ընդունված բանաձևի կապակցությամբ, ուր նշված էր, որ ԵՄ կատույցները պետք է չճանաչված պետություններում վստահություն ներշնչող ծրագրեր իրականացնեն եւ երկխոսություն ծավալեն քաղաքացիական հասարակության հետ: Հայ պատգամավորը փորձել էր ճշտել, թե ինչո՞ւ մինչ օրս որեւէ նման ծրագիր չի իրականացվում Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում եւ ինչո՞ւ ԵՄ ինստիտուտները չեն կատարում իրենց իսկ խորհրդարանի կողմից ընդունված բանաձևեր:

Ի պատասխան հայ պատգամավորի բանավոր հարցի, նախօրեին Եվրոպական խորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը գրավոր նամակ է ուղարկել հայ պատգամավորին: Նամակում, մանսավորապես, ասվում է.

«Հարգելի Նաիրա Զոհրաբյան,

Շնորհակալություն եմ հայտնում Ձեր կողմից փետրվարի 4-ին ուղարկված նամակի համար, որտեղ, հղում անելով Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված բանաձևին, ասվում էր, որ ԵՄ-ն պետք չճանաչված պետություններում ներգրավվի եւ զարգացնի այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն վստահության եւ երկխոսության ամրապնդմանը չճանաչված պետություններում հասարակությունների միջև: Դուք հատուկ ընդգծել էիք Լեռնային Ղարաբաղի խնդիրը, որին ես խոստացա պատասխանել գրավոր:

07.04.2011-ի ընդունված՝ Եվրոպական հարեւանության քաղաքականության վերանայման վերաբերյալ բանաձևի շրջանակներում եւ կցանկանայի ընդգծել, որ այս հարցը բազմիցս քննարկվել է անցյալում եւ մի շարք բանաձևեր են ընդունվել: Այսպիսով, Եվրոպական խորհրդարանի համար

ԵՄ-ի հիմնական նպատակն է խթանել վստահության ամրապնդմանը եւ քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը ոչ միայն առաջնորդների, այլև քաղաքացիական կազմակերպությունների միջև: Լիազումարը, այսպիսով, կոչ է անում Եվրոպական հանձնաժողովին աջակցել քաղաքացիական հասարակության ուղղված ծրագրերին, որոնք միտված են խթանելու հաշտությանը եւ տեղական բնակչության միջև շփումներին:

Ավելին, 2012 թ-ին ընդունած 2 օրենքներում, որոնք վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին, Եվրոպական խորհրդարանը պահանջում է, որ Եվրոպական հանձնաժողովը եւ ԱԳԵԾ-ն (Արտաքին գործերի Եվրոպական ծառայություն) աջակցեն վստահության ամրապնդման միջոցառումներին, որոնք կտարածեն երկկողմանի խաղաղության, հաշտության, վստահության գաղափարներ: Բացի այդ, ԵՄ-ի ֆինանսավորած ծրագրերը նպատակ ունեն խթանելու փոխզիջմանը եւ խաղաղ կարգավորմանը:

Ես ուրախ եմ մատնանշելու, որ այս խոսքերը գործ են դարձել: ԵՄ-ն այժմ ֆինանսավորում է «Եվրոպական համագործակցություն հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագիրը:

Այս բացառիկ նախաձեռնությունը նպատակ ունի դրական ազդեցություն ունենալ հակամարտության կարգավորման գործընթացի վրա՝ իրականացնելով բազմազան ծրագրեր տեղական գործընկերների հետ՝ խթանելու տարածաշրջանում տեւական խաղաղությանը: «Եվրոպական համագործակցություն հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագիրը համակարգում է այն գործողությունները, որոնք իրականացվում են տարածաշրջանում 5 հիմնական Եվրոպական կազմակերպությունների կողմից՝ համագործակցելով տեղական գործընկերների հետ: Տեղական ՀԿ-ները, ինչպես նաեւ անհատները, որոնց հուզում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, կարող են մասնակցություն ունենալ:

Իրապես, ԵՄ պատվիրակությունը Երեւանում 15.11.2013 թ-ին ծրագրային առաջարկներ է ներկայացրել ԵՄ տարածաշրջանային դրամաշնորհների նախաձեռնության սխեմայի երկրորդ փուլում իրականացնելու համար: Առաջին փուլում, ըստ տեղեկատվության, բազմաթիվ սեմինարներ են կազմակերպվել, որոնք համախմբել են երիտասարդներին, կանանց, տեղահանվածներին, քաղաքացիական հասարակության ակտիվիստներին, քաղաքական գործիչներին, լրագրողներին՝ խթանելու վստահության ամրապնդմանը:

Ուստի, ես հույս ունեմ, որ քաղաքական խթան տալով նման նախաձեռնություններին, որոնց մենք լիովին հավատարիմ ենք մնում, Եվրոպական խորհրդարանը ամրապնդել է Եվրոպական միության միջնորդական կարողությունները՝ ուղղված հակամարտության կարգավարմանը, քանի որ մենք զգում ենք, որ դրանք անհրաժեշտ են երկխոսության արդյունավետության համար, ինչը թույլ կտա վերանայել անցյալի իրադարձությունների պատկերացումները, հաղթահարելու ատելությունն ու վախը՝ մաքսիմալիստական դիրքորոշումների շուրջ փոխզիջումների գնալու համար», - նշել է Շուլցը:

Արեւմտյան Վայստամ

Հայկական արմատներով թուրք լրագրող. Ապրիլի 23-ից Ստամբուլի Թաքսիմ հրապարակում Հայոց ցեղասպանության հետ կապված ցույցեր են սկսվել



Ապրիլ 23, 2014

2005-ի ապրիլից թուրքական հասարակության մեջ շատ քան փոխվեց. Հայոց ցեղասպանության մասին գիտաժողով անցկացվեց, թուրքերը սկսեցին խոսել Ցեղասպանության մասին, ապրիլի 23-ին «Իրադրությունը Թուրքիայում եւ Հայաստանում 99 տարի անց» թեմայով քննարկմանը հայտարարել է հայկական արմատներով թուրք լրագրող, թուրքական «IMC» հեռուստաալիքի լրատվական ծրագրերի ղեկավար Արիս Նալչինը:

Ըստ նրա՝ 2007թ., երբ սպանվեց «Ակոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը, թուրքական մտավորականության որոշ ներկայացուցիչներ բողոքի ձայն բարձրաաացրեցին: «Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության հարցով հավաքներ եղան, դա մեծ քայլ էր», - Նալչինը: Նա ընդգծել է, որ բողոքող թուրք հասարակության շարքերում հիմնականում կարելի է տեսնել նոր եւ կրթված սերնդին:

Ապրիլի 23-ից, այսինքն՝ այսօրվանից, հայտնել է Արիս Նալչինը, Ստամբուլի Թաքսիմ հրապարակում սկսվել են Հայոց ցեղասպանության հետ կապված ցույցերը, իսկ ապրիլի 24-ին հավաքներ տեղի կունենան Թուրքիայի համալսարաններում: Ըստ նրա՝ Դիարբեքիքում, Այնթափում, Անթալիայում հավաքներ կլինեն, իսկ Վանում ցույց է տեղի ունենալու: «Սակայն, չնայած դրան, Թուրքիայի կառավարության ժխտողական դիրքորոշումը չի փոխվել», - նշել է նա:

NEWS.am

Թուրքագետ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը պետք է տեղափոխել իրավական դաշտ



Ապրիլ 23, 2014 | 13:33

Հայոց ցեղասպանությունը ժամկետային սահմանափակում չունեցող հանցագործություն է: Այս մասին, այսօր՝ ապրիլի 23-ին, «Իրավիճակը Թուրքիայում եւ Հայաստանում 99 տարի անց» թեմայով քննարկման ժամանակ հայտարարել է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

Նրա խոսքով՝ վերջին տարիներին հայ հասարակությունը ակնհաստես է դարձել Թուրքիայում ընթացող նոր գործընթացների՝ կապված Հայոց ցեղասպանության փաստի հետ: Թուրքագետը նշել է, որ հայ հասարակության համար վերջին 10 տարիների ընթացքում նորություն էր Թուրքիայում Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումն ու ակտիվացումը, ինչպես նաև մի քանի իբր հայամետ նախաձեռնությունների իրականացումը, որի հետևում, իրականում, այլ նպատակներ են թաքնված:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին միջոցառումների նախապատրաստությանը, Մելքոնյանը նշել է, որ ավանդական միջոցառումներ կլինեն, կոնֆերանսներ, հրապարակումներ. «Բայց, առաջին հերթին, կարևոր է, որ մենք Հայոց ցեղասպանության հարցը տեղափոխենք իրավական հարթություն: Երկրորդ, որ 100-րդ տարելիցի նախաշեմին կարողանանք ամփոփել մեր կրած նյութական եւ հոգեւոր կորուստները», -ասել է նա:

Թուրք կուսակցապետը Թուրքիային կոչ է արել առերեսվել Ցեղասպանության հետ

Ապրիլ 23, 2014 | 12:46

Թուրքիայի քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» (BDP) կուսակցության նախագահ Մելլահաթին Դեմիրթաշը հայտարարել է, թե ապրիլի 24-ը առիթ է, որ Թուրքիայում առարեսվեն տեղի ունեցած բոլոր ողբերգությունների հետ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության առաջնորդ Մելլահաթին Դեմիրթաշը նշել է, որ 1915-ի ապրիլի 24-ին Ստամբուլում 246 հայ մտավորականների արտոբվ սկսվել էր հիտլորքքերի կողմից հայերին ցեղասպանության ենթարկելու ընդարձակ նախաձեռնությունը:



«Ոչ թուրք եւ ոչ մուսուլման հանդիսացող բոլոր էթնիկ խմբերին այս հողերից մաքրելու ծրագիր է իրականացվել, իսկ հայերի նկատմամբ թշնամական վերաբերմունքը դեռ շարունակվում է: Այս հողերում, որտեղ աշխատում ենք եղբայրություն կառուցել, ակնատես ենք լինում, թե ինչպես են ստիպում «հայ» բառը որպես հայհոյանք ընդունել:

Թուրքիան պետք է առերեսվի պատմության հետ: Ապրիլի 24-ը առիթ է, որ Թուրքիայում առերեսվեն բոլոր ողբերգությունների հետ», -ասել է քուրդ առաջնորդը շեշտելով, որ կիսում է հայերի ցավը: NEWS.am

Վանի Աղթամարում 100 տարի անց հայերը նշել են Սուրբ Զատիկը



Ապրիլ 23, 2014
Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում 100 տարի անց մի խումբ հայեր նշել են Սուրբ Զատիկը: (Ֆոտոռեպորտաժ)
Ինչպես տեղեկացնում է NEWS.am-ի թղթակիցը Վանից, ապրիլի 20-ին, «Նարեկավանք տուր» ընկերության

կողմից կազմակերպված ուխտագնացության ընթացքում Հայաստանից ժամանած մի խումբ ուխտավորներ Վանա լճի Աղթամար կղզում այցելել են Սուրբ Խաչ եկեղեցի, միասին աղոթել, մոմ եւ խունկ վառել:

Ավելի ուշ, հայ ուխտավորները կղզում գատկի սեղանի շուրջ կրկին աղոթել են եւ «հավկիթ» խաղացել: Աղթամար կղզին իր հերթին այժի է ընկել յուրահատուկ գեղեցկությամբ, որն արտահայտվել է կղզու հայտնի ծառատեսակ հանդիսացող ծաղկած նշենիներով:

Ամերիկացի փորձագետ. Թուրքիայի կողմից բռնագրավված Արեւմտյան Հայաստանի հայ բնակչությունը մշակութային վերակենդանացման կարիք ունի



Ապրիլ 22, 2014
Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում հարկավոր է ԱՄՆ-ի առաջնորդությունը, ընդ որում այնպես, ինչպես որ մյուս հարցերում: Այդ մասին NEWS.am-ի հետ զրույցում հայտարարել է Բրաունովյան համալսարանում (Փրովիդենս, Ռոդ-Այլենդ, ԱՄՆ) գիտությունների թեկնածու Ադամ Սաքսը՝ հավելելով, որ այս հարցում անհրաժեշտ է նաեւ ԵՄ ու «Մեծ ութնյակի» ընդհանուր դիրքորոշումը: Ադամ Սաքսի խոսքով՝ հայ-թուրքական արձանագրությունները աշխարհառագմավարական իրականության ու պայմանների միջազգային հարց են:

«Սակայն հայ-թուրքական հարաբերությունների հիմնական խնդիրը միջազգային իրավունքի եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության չափանիշների համապատասխանությունն է այն փաստին, որ Արեւմտյան Հայաստանի հայ ժառանգությունը, որն այս պահին բռնագրավված է Թուրքիայի կողմից, մշակութային վերակենդանացման կարիք ունի: Ինչպես հայտնի է, եկեղեցիները 1 տոկոսը, որը մինչեւ հիմա դեռ դրա տարածքում, շատ վատ վիճակում են եւ ոչ մի կերպ պաշտպանված չեն», - նշել է նա ու հավելել, որ գլխավոր առաջնահերթությունը հարցը դիվանագիտական բանակցությունների առարկա դարձնելն է:

«Անհրաժեշտ է համախմբել ողջ աշխարհի ժողովուրդներին. սա հարցի լուծման միակ ուղին է, իսկ Ֆրանսիայի օրինակն արդեն ցույց է տվել, որ Թուրքիայի սպառնալիքների ռազմավարությունը վստահության արժանի չէ եւ տեղ չունի միջազգային դիվանագիտությունում», - ընդգծել է Ադամ Սաքսը:

Դիարբեքիի «Սուրբ Կիրակոս» եկեղեցում հայերը նշել են Չատիկը



Ապրիլ 21, 2014 | 14:27

Թուրքիայի հարավ –արեւմուտքի Դիարբեքի քաղաքի հայկական «Սուրբ Կիրակոս» եկեղեցում նշել են Չատիկը: Հարյուրավոր հավատացյալներ ներկա են գտնվել Չատիկի պատարագին, հայտնում է «Armenian Weekly»-ն:

Ներկաների թվում էր նաև Դիարբեքիի քաղաքապետարանի նորանշանակ ղեկավարներից Ֆիրաթ Անլին, ինչպես նաև նախկին քաղաքապետ Սուր Աբդուլա Դեմիրբաշը:



Չատիկի պատարագից հետո եկեղեցում հայ աղջկա մկրտության արարողություն է տեղի ունեցել: Աղջկա ծնողները Սասունից են, այժմ ապրում են Ստամբուլում, սակայն անապյան ցանկացել էին մկրտել նրան «Սուրբ Կիրակոս» եկեղեցում:

Եկեղեցում նույնպես ցուցահանդես էր բացվել՝ «Հայ ընտանիքի կորսված պատմության սպագույցներ՝ Դիլիլյան եղբայրների օբյեկտիվով (1872-1923)» խորագրով:



Նշենք, որ 1400 հավատացյալների համար նախատեսված Դիարբեքիի «Սուրբ Կիրակոս» եկեղեցին կառուցվել է 1376թ.՝ Անչեփեթ թաղամասում, որը տեղի մահմեդականներն անվանում են «գյավուրների թաղամաս», քանի որ այստեղ մինչև Հայոց ցեղասպանությունը բազմաթիվ քրիստոնյաներ են ապրել: «Սուրբ Կիրակոս» եկեղեցին 1980 թ.-ից ճակատագրի քմահաճույքին էր մատնվել: Սակայն Ստամբուլում բնակվող Դիարբեքիի հայերը եկեղեցու վերանորոգման համար ստեղծել էին «Սուրբ Կիրակոս» հիմնադրամը: Ծախսերի 70% -ն իր վրա է վերցրել հիմնադրամը, իսկ 30% -ը՝ Դիարբեքիի քաղաքապետարանը:

Թուրքիայում քվեաթերթիկի վրա հայերենով հարց. Ո՞ր են այս երկրի պատմական կուսակցությունները



Ապրիլ 02, 2014 | 16:09

Թուրքիայում մարտի 30-ի ՏԻՄ ընտրությունների հետ կապված ստամբուլահայ Մելիսսան ֆեյսբուքյան էջում տեղադրել է քվեաթերթի լուսանկար, որում հայերենով ուշագրավ հարցադրում է արված:

Լուսանկարում երևում է սեղանի վրա դրված քվեաթերթիկ, որի վրա հայերենով գրված է. «ՀՅԴ-ՄԴՀԿ-ՌԱԿ. ուր են այս երկրի պատմական կուսակցությունները»:

Մելիսան լուսանկարի տակ թողել է հետևյալ մեկնաբանությունը. «Թուրքիայի քվեարկությունից»:

Թուրքական ամոթ. Հայ թեկնածուի անունը չի եղել քվեաթերթիկի վրա



Ապրիլ 02, 2014 | 12:47

Թուրքիայում մարտի 30-ի ՏԻՄ ընտրություններում խայտառակ միջադեպն է հայտնի դարձել: Թաղապետի թեկնածու առաջադրված հայազգի Ժակլին Քուրթի անունը բացակայել է քվեաթերթիկների վրա:

Թուրքական Vatan պարբերականի փոխանցմամբ՝ Ստամբուլի Ֆաթիհի շրջանի Ջերրահիվաշայ թաղամասում թաղապետի թեկնածու առաջադրված Ժակլին Քուրթի անունը բացակայել է Դավութիաշա լիցեյում տեղակայված ընտրական տեղամասում քվեարկության ներկայացված քվեաթերթիկների վրա:

Այդ տեղամասում ընտրողները հետաքրքրվել են, թե ինչու չկա Ժակլին Քուրթի անունները եւ ստացել պատասխան, թե նման թեկնածու չկա:

Ժակլին Քուրթը հայտնել է, թե հիշյալ տեղամասի պատասխանատուների նկատմամբ հայց է ներկայացնելու:

Պոլստ հայոց պատրիարքարանը քեսաբահայերին օգնելու կոչ է արել

Ապրիլ 09, 2014

Ստամբուլում Հայոց պատրիարքարանը Քեսաբի դեպքերի հետ կապված հայտարարություն է տարածել կոչ անելով ստամբուլահայերին աջակցություն ցուցաբերել տեղահանված քեսաբահայերին:

Պոլստ հայոց պատրիարքարանի հայտարարության մեջ նշվել է, թե հայ ժողովրդի համար պարտականություն է օժանդակել եղբայրներին՝ հատկապես Սուրբ Զատիկի տաղավարի պատրաստության շրջանում:

«Պատրիարքական Աթոռի հոգեւորականների դասը քեսաբահայերին օգնելու արշավը բացել է հատկացնելով 5 հազար լիրա օժանդակություն: Թող Տերն օրհնի նվիրատուներին եւ բարեգործներին եւ հեռու պահի ամեն փորձությունից եւ աղետից», -նշվել է պատրիարքարանի հայտարարության մեջ:

Միջազգային

Էրդողանը ապրիլի 24-ից առաջ ուղերձ է հղել հայերին



Ապրիլ 23, 2014

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը առաջին անգամ ապրիլի 24-ի հետ կապված հանդես է եկել հայտարարությամբ, որը տեղադրվել է վարչապետի պաշտոնական կայքում:

«Մեր հայ քաղաքացիների եւ ամբողջ աշխարհի հայերի համար հատուկ նշանակություն ունեցող ապրիլի 24-ը կարևոր առիթ է ազատորեն կիսել իրենց մտքերը: Օսմանյան կայսրության վերջին տարիները անկախ կրոնից եւ էթնիկ խմբից հայ, թուրք, քուրդ, արաբ եւ մյու միլիոնավոր օսմանցի քաղաքացիների համար դժվար ժամանակաշրջան լինելն անհերքելի է:

Այդ ժամանակաշրջանում ինչպես օսմանյան կայսրության ցանկացած քաղաքացու, հայերի վերապրած ցավերը, հիշողությունները հասկանալը եւ կիսելը եւս մարդկային պարտականություն է:

1915-ի իրադարձությունների հետ կապված տարբեր մտքերն ու տեսակետները ազատորեն արտահայտելը ժողովրդավարական մշակույթի եւ ժամանակի անհրաժեշտությունն է: Իհարկե, Թուրքիայում կգտնեն նաեւ այնպիսիները, ովքեր այդ ազատ մտնորսը կքննադատեն:

Սակայն չի կարող ընդունելի լինել 1915-ի իրադարձությունները Թուրքիայի դեմ որպես պատճառ օգտագործելը եւ դարձնել այն քաղաքական հակամարտություն: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները բոլորիս համատեղ ցավն է: Այդ ցավոտ ժամանակաշրջանը արդար հիշողության հեռանկարով նայելը մարդկային եւ գիտական պատասխանատվություն է:

Առաջին համաշխարհայինի ընթացքում, որին գոհ գնացին ամեն կրոնից եւ ազգից, տեղահանության նման ոչ մարդկային հետեւանքներ ծնած իրադարձությունները չպետք է արգելք հանդիսանան թուրքերի եւ հայերի միջեւ համակրանքի ստեղծմանը եւ մարդկային վերաբերմունքին:

Այսօր աշխարհում պատմությունից քեն պահել եւ նոր կռիվների առիթ տալը անընդունելի է եւ մեր համատեղ ապագայի կառուցման տեսանկյունից էլ օգտակար չէ:

Այս հասկացությամբ, մենք, որպես Թուրքիայի հանրապետություն, 1915-ի իրադարձությունների գիտական ուսումնասիրման համար պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու կոչ արեցինք: Այդ կոչի վավերականությունը պահպանվում է: Թուրք, հայ եւ միջազգային պատմաբանների կատարելիք աշխատանքը 1915-ի իրադարձությունների լուսաբանմանը եւ պատմության ճիշտ ընկալման համար կարևոր դեր են խաղալու:



Ռուսաստանի հայերի նամակը Պուտինին եւ Բան Կի Մունին՝ կապված Քեսաբի դեպքերի հետ

Ապրիլ 05, 2014 | 02:41

